ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«28» հունիսի 2024թ. № 650

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ԹԻՎ 583 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 11-ի թիվ 583 որոշումն ընդունվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163–րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի խախտումներով, քանի որ Կադաստրի կոմիտեի 2024 թվականի հունիսի 18-ի թիվ ԱՏ-18062024-06-1057 և 2024 թվականի հունիսի 19-ի թիվ ԱՏ-19062024-06-0251 տեղեկանքների համաձայն կիսակառույց շինության նկատմամբ Սպիտակ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում առկա չէ, և Սպիտակ համայնքի ղեկավարը իրավասու չէ օտարել Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով չպատկանող գույք, բացի այդ որոշումն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 19-ի թիվ 157-Ա որոշման պահանջների խախտմամբ, որով անավարտ շինարարության բնակելի տները փոխանցվել են համայնքներին, դրանք կարիքավոր ընտանիքներին անհատույց հատկացնելու համար՝ ***որոշում եմ.***

1. Անվավեր ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 11-ի «Ցոլակ Լևոնի Վարդանյանին աճուրդով անշարժ գույք օտարելու մասին» թիվ 583 որոշումը:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ Ցոլակ Լևոնի Վարդանյանին վերադարձնել Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 11-ի թիվ 583 որոշման մեջ նշված գույքը գնելու համար վճարած դրամական միջոցներն ամբողջությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հունիսի 28
ք.Սպիտակ